

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ԵՐԵՅ ՄՄԵՑԻ ՏԱՂԱՍԱՑ

Տաղանդաւոր բանաստեղծի մը հետ չէ
որ գործ ունինք, այլ աւելի ճիշգ հանգաբրի
մը հետ, որմէ հասած ոտանաւորներէն դռնէ
մէկը մատենազրական կամ բանասիրական՝
արժէք մը կը ներկայացնէ եւ հարկ է որ հր-
բառարակուի:

Անձնական ձեռապրական հաւաքածոյիս
թիւ 43 շահեկան ժողովածոյին մէջ, որ ժի-
դարեան հաւաքածոյ մըն է, կան նաև
երկու ոտանաւորներ որոնց անկապերը եւ
յիշտակութիւնները ցոյց կու տան իրք հե-
ղինակ Յակոբ երէց Սանեցի:

Բազմաժամանակ Աճառեանի Անձնանուն-
ներու Բառարանին մէջ կը ներկայացնուի իրք
թիւ 264 Յակոբ, «Յակոբ երէց Սանեցի, տա-
ղասաց, յիշուած է 1585 թ(ուին)». իր տա-
ղերից տես Կոստանեանց, Նոր. Ժող. Դ. էջ
9-11. տես նաև թիւ 266» (այսինքն բառա-
րանին թիւ 266 Յակոբը: Յ. Ք.):

Աճառեան թիւ 266 Յակոբին ժաման անդ
կը գրէ. «Յակոբ վարդապետ. տաղասաց.
ունի Տաղ Երաւանչէմի՛ գրուած 1635 թ
(ուին). տես Կոստանեանց, Նոր. Ժող. Բ. 20:
Տաշեան, Ցուց(ակ) 1122ա տալիս է նրան
նաև ուրիշ տաղեր եւ միացնում է նախորդի
հետ: Դժուարութիւն է յարուցանում թր-
ւականը»:

Հոս նախ ներկայացնենք թիւ 264 Յակոբ
Սանեցիի տալլը առնելով Կոստանեանցի նոր
Ժողովածուի թիւ Դ. պրակէն (Վաղարշա-
պատ, 1903) ինչպէս որ Հրատարակուած է
էջ 9-11: Տաղը անիսորագիր է.—

Ա՛յ անգին գնիար
Դու դըժար զուար,
Պէհրիեամ մարգարիտ լալ չար
Պասկ զինց հիւսէ,
Ասուած զինց պահէ:
Կիսար անլշահու
Քո գլխայդ միմ յուտ,

Կանանչ բաժկում ամուր չես,
Հոս դու միշտ կանամչ ես.
Ասուած զինց պահէ:
Ոսկի սոփերայ
Լալ շարապաղայ
Անկէց առ ենց ոսկի կուզայ,
Մատանի շինէ,
Ասուած զինց պահէ:
Բազմաստեղն նման
Դու լաւին աշնան
Լուս արեգակ արեւ գարնան
Զինց լուսաւորէ.
Ասուած զինց պահէ:
Եղէկ կինամոն
Ցիշէ Սողոմոն
Հիրիկ զմուռ Դաւիթ մեռն
Արքայ զինց օծէ.
Ասուած զինց պահէ;

Բարունիք կարդան,
Խունկ ստաջն բազրան
Եղունիք կնդրուկ եռու հայկան
Ցառաքեւդ ծխէ:
Ասուած զինց պահէ:
Է՛. լալ եազուր ակ
Սուտակ գահանակ
Շիմիր, զիւմիրիք, կարկենան քազ
Գիլայդ վայել է.
Ասուած զինց պահէ:
Ցանկապ բուրասուան,
Հոս միւշի ամսէրխան,
Նարդս քրում եալ պալասան
Երեսդ սրբէ,
Ասուած զինց պահէ:
Անիւծի ուժով
Վաշախի մորբով
Կամար ումեր սամրի մազով,
Զիւրք դումաշ կարէ'
Ասուած զինց պահէ:
Միւմպիւ մանուշակ

Դու գումշշ հայտի,
Տեսդ այծեման առ լուս խայտակ՝
Առ իս դու մայէ՛.
Ասուած զենց պահէ՛:
Ասուած առաօտիհան,
Դարպահ փղոսկրեաՅ,
Քո ուխտաւորքն եթ ենց զուրպան
Չնոքդ մորքէ՛.
Ասուած զենց պահէ՛:
Ցաւեր է Սրբին
Ձեւ շինէ քավին
Դու աշակերտ էֆլաքօինն,
Դու զնա բժիշկէ՛.
Ասուած զենց պահէ՛:

Կոստանեանց առզ արտադրած է 1695
Թռւականով գրչափիր տաղաքանէ մը: Խնդք
այ նկատած է որ ատղին քանեակենքուն բա-
կրդնատառերո (անկապերը) կը հիւեն ՅԱ-
ԿՈԲ ԵՐԵՒՅ ԱԱԼԱԾ: 1695 թռւականով գրչա-
ռիքին տաղիս օրինակը կրնայ աղաւաղուած
րլալ կամ սղումները լուս պարզուած յրե-
լան: Առ այժմ ատղիկա չէ կորեւորը, այլ՝
տաղին յօրինման առարին է 1585 թռւականը,
Կ'ըսէ Կոստանեանց և կ'աւելցնէ: որ է 80+
5+1000+500=26ոչինէ թռւին (անդ էջ
65-66): Արդարեւ տաղին փերջին առունին
Երկրորդ առղին մէջ Յակոր երկը Սսեցի կը
նշանակէ թռւականը «2եր շինէ թռւին», որ
եւ կը նախնարեն կարգաւ «2եր շինէ թռ-
ւին», որ կը հաշուուի 80+5+1000, այսին-
քն Հայոց 1085 թռւականը կամ Քրիստոսի
1636 եւ ոչ թէ հայկական տաղի մը մէջ ոչ-
հայկական եւ անսովոր 1585 թռւականը,
ինչպէս որ Կոստանեանց հաշուած է եւ Ա-
ճառեան առանց քննելու թղթուած: Թռւա-
կանին մեր արդարացի սրբադրութեամբ ու-
րեմն կը չանայ Աճառեանց «Դժուարութիւն
է յարուցանում թռւականը եղրակացու-
թիւր եւ իր բարարածին 264 թիւ Յակորը
կը նոյնանայ անդ թիւ 266 Յակորին հետ:
Սակայն աճառապարես խելու որ այս նոյնա-
ցումը Աճառեան կրնէ Հ. Տաշեանի հետեւ-
լու: Գիտի տեսնենք իր կարգին թէ որքա՞ն
ճիգ է այս նոյնացումը:

Հ. Տաշեան իր կոթողային Ցուցակին
մէջ անուանացնենին Յակորներուն շարքին
նշանակած է «Յակոր Սսեցի Վարդ(ապետ)
Տաղասաց (էջ 1122ա.)»: Կը նշանակէ իրը ա-

նոր Հեղինակութիւն հետեւեալ տաղերը:—
Առաջին — «Զականջդ բաց գրան լուէ, ի
միտ առ եւ ի թուինթ դրէ, կաւարտի Զամէն
ասիր զքիզ յէր թողիր, զայլք ի բաց թող եւ
քեղ փակիր»: Բայց տաղին խորագիրը մի-
այն «Յակոր գարդապետ ասացեալ ունի եւ
կ'երեւայ թէ տաղին մէջ ոչ մէկ տեղ Յակոր
Ժարդապետին Սսեցի բլալուն մասին վկա-
յութիւն կայ:

Երկրորդ — «ՅԱստուծոյ շինեալ քաղաք
պատուական» ծանօթ եւ յաճախ օրինակուած
տաղն է, որուն խորագիրը «Տաղ Յակորայ
տացեալ յասն սուրբ յերուազէմ» է եւ
շրմին «Սսեցի մակիրը»: Տաղը կ'աւարտի
«ցետա տոմարիս մերս թուական»: Ռ. Եւ
ԶՊ (1685) թիւ իրան, Յակորը այս քեզ երդ
բնաւիցան:

Երրորդ — Անի խորագիրը «Գոնձա-
խան Մովսէսի կաթողիկոսի եւ Գրիգորի
մէծ մարգապետի»: Յիշուած Մովսէսը ան-
տարակոյս Տաթիւացի կոչուած կ'միանեայ
Կաթողիկոսն է, իսկ Գրիգոր մէծ վարդա-
պետը հաւանաբար կեսարացին: Տաղին բա-
կիցը

Եթանա զիտութեանց,
Տանմարմին ընու թեամց,
Յերկինց պետութեանց.

Երից երիւակաց որոշեալ անուանց»

Հեղինակ կը յիշուի ՅԱԿՈԲԷ է:

Զարմանալի է որ այս արուած երեք տա-
ղերէն ոչ մին «Սսեցի» յորչորջումը ունի եւ
առկայն Հ. Տաշեան Յակոր Սսեցիի մը կը
գերազրէ զանենք: Ասոնցմէ նրուազէմի
նուիրուած վերոյիշեալ երկրորդ տաղը Յա-
կոր Թօսիաթեցի (Բաղուկեց կոչուած)՝
Հեղինակութիւր նկատուած է:

Հ. Հ. Ասկեան Վիեննայի Միխիթարեանց
ձեռքարաց Բ. Հատորին մէջ (էջ 681) կը
նշանակէ անսուրափիր տաղ մը «Այս տաղ
զուսական բեր Յակոր լեզուն, անսնել էր-
տեսիր նա ի Ղարասուն»: Ասոր Հեղինակ
ունի Յակոր Վ(արդապետ) Սսեցի: Սակայն
Հ. Ասկեան չի յիշեր թէ ինչո՞ւ տաղը Հեղի-
նակութիւնն է Յակոր վարդապետ Սսեցիի Յ
Կրտուի թէ տաղը խորագիր չունի, ուրեմն
Հեղինակին անումը պէտք է դանուի տնկա-
պերուն մէջ կամ տաղին փերջը:

Արտաւաղդ Արքապիսկոպոս Միւրմէեան

իր Ցուցակ Մասնաւոր Զեռագրաց Հալէպի գործին մէջ (Երուսաղէմ 1935) թիւ 28 մեծարժէք տաշարանին մասին խօսուծ առեն կ'արժանագրէ «Ճաղ աղպան յակոր վ(ա)րդ(ա)պ(ե)տն ասացեր է որժամ որ իրիցկին առ ա(սուուա)ծ է փոխեր» եւ կու աայ ասպին սկիզբը».

«Այ անգին գոհար, դու դրժար կրտվար, Պահրիան մարգարիտ լալէար պըսակ Ֆեզ հուսէ...» (էջ 386)

Արդ այս նոյն այն ասպին է զոր մէր աշխատութեան սկիզբը հաստարակեցինք առնելով կոստանեանցի նոր ժողովածուուի թիւ Դ. պրակէն, որուն տնկապերը կու տան ՅԱԿՈԲ ԵՐԼԻ ԱՍՍԸ: Ուրեմն այսպէս կը հաստատուի որ Յակոր երէց Սսեցի նոյն անձն է Յակոր վարդապես Սսեցի հետ, եւ կարիք չկայ զայն երկու տարբեր անձեր նկատելու:

Յակոր Սսեցի ծննդեան թուականը ինձի անձանօթ կը մնայ: Անշուշան իր Սսեցի կոչումը արուած է իրեն Սիս ծնած ըլլալուն համար: Մահօթ չէ նաեւ իր ծնողաց անունը, իր քահանայանալուն թուականը, իր կնոջ անունը, ինչպէս նաեւ գաւակներ ունենալու: Սակայն գիտենք որ տաղերդու էր իր քահանայութեան ժամանակ: Յաջորդ տաղը առնելոյն անձնական ծնողադրաց հաւաքածուին թիւ 23 զրշագրէն, զրուած է 1635ին ինչպէս որ պիտի տեսնենք, իր քահանայութեան շրջանին: Ասիկան նոյն ասեն իր կարեւորագոյն ասպին է, զաւազանապիր մր, որոնց ուսումնամիտրութիւնը կարեւոր բանասիրական աշխատութիւն է: Ահա այդ շահեկան տալը: Սկիզբը նոտրդիք կարմրու:

«Ճարագրութիւն» վ(ա)րդ(ա)պ(ե)-ա(ա)ց Հայոց. ի գաւչայ հետէ ոտիւ շափեալ որ անուան երդողի եւ չափողի»:

Ա. — Յառաւտառուր հայրդ գրած.

Որդիս ծընած հոգիդ բյունած,
Անձամբ երիս ես դաւանած.

Թնաւրիւն(մ)ըդ մի յուրագիտաց:

Բ. — Արժանացոյ զիս փորհամաց.

Տար իմ ուտել զի մաս ու հաց,
Ներտապ ամել գաւազանաց,
Զվարդ(ա)պ(ե)տաց մերյայն ազգաց:

Գ. — Կայր ի վերջինս ժամանակաց.

Նախ մինիրար մակ զոյ կոչած,
Յառաւրս արա լիւռն քազած.

Կարուղիկս ապիրան զոված:
Դ. — Ումի զգիր դատաստանաց.

Ժողովեալ երևոց նորա կոտակաց,
Փոխէ քվին Հայոց մեծաց.

Ի վեց հարիւր Կ(60)մէկաց (1212).

Ե. — Բամայր յետոյ զում դպրոցաց.
Տ(է)ր Վանականն ի տայուշաց.

Ջխորամշատըն սայ շինեաց
Մեր եւք հարիւրն եղեւ հանկած (1261).

Զ. — Ենոյ Վարդան դպրոց է բաց.
Ս(ա)դմ(ս)ս զօրէնէ գերբակ մեկնեաց.

Մր. սարգսի զամինէն ասաց
Եւքըն հարիւր քըսան ննջեաց (1271):

Է. — Բարուն ներկաւ տարան մշաց.
Գիտէր զիեզու եւ զժամ յումաց.

Ի փետրվար վեցըն գրած.
Ի գլածոր կա նա բաղած:

Ը. — Խետա սանոյ նիշ զաւառաց,
Ներսէն հասոյց բզմն փառաց
Ջինմիսէ մեկնիչ լուծեաց,
Ի այլ մեկնութիւն(մ)ս ներականաց:

Թ. — Ցուցից զալիկրտ սորին պատուած.
Զարունեցին յոհան ընտրած.
Մակ ի բանէն տ(եան)ն կախած:
Փախ ուր հարիւր եսու եւ հնկաց (1386):

Ժ. — Անուն զրիգոր մակ տարեւաց.
Արար գեաղուածն սաղմանաց.

Հարցմանենք լուծմանէն նըրքահայեաց.
Փախ ուր հարիւրին ւ խումաց (1401):

Ճ. — Զէն յին հարիւր դեռ չէր դիպած.
Տ(է)ր դամիկին զդասն ասաց.

Գրիգոր գրազումն աշակերտեաց.
Այլ ի կազի սա մեզ պիտաց:

ԺԲ. — Պատմեն զյոհամ թէ ի հանչեաց.
Զդամիկի աշկերտ համած.
Թիւմ հասաւ երեխտակաց.
Ի մակ գոշէն որմէ սկսած:

ԺԴ. — Արնիցեցին սամներբարդեաց.
Գրիգոր եւ մակ չորբամ ձայնած.

Տաս գարեւելու արա ի կաց,
Ըլյարեւմասու քոզ պահ մի բաց:

ԺԵ. — Ներսէն զգիգորըն որդորեաց.
Մատոպ կոչեն զմա ի լեզաց.

Նա վարդապետ վարդապետաց.
Իմն ձ(100) մէշ Ռ(1000)աց:

ԺՖ. — ըսէ զերսէն որ զիր մեկնեաց.
Բաղէշ բազանն է նա ծնած.

- Հոմանուանիք են զիստ իրերաց.
Ներսէս անուան երեք եղած :
ԺԶ.— Առայ զմերսէս յամփայ ելած .
Սա հետեւակ բռկիկ գրած .
Քամ պետից գու(ա)զամ տրված ,
Երեք ներսէսը վնարեաց :
ԺԷ.— Իւս բամից ի խամաց .
Զաւ(է)ր յովաննիւս ի կարց դրած .
Եր աստանցի ի նայն տեղաց .
Մակ բրգուչեց էր համբաւած :
ԺԸ.— Սիմեոնն յավիաննու յուսած .
Ակպարանցի զայ շարադրած .
Ցորմէ զօշ սկիզբն առած .
Սա հինգ եւ տառ գաւազան լրցած :
ԺԹ.— Առ սիմեոնին թա զընաց
Որ կարապես էր ամուտած .
Ի բաղէշու մեծ նահանակաց .
Գնըլըն փարխնդ տրդայ որնած :
Ի.— Թիմոսըն հոսառ բանաջրաց .
Կարապեսի աշկերս գոված .
Ազարիայն Հայոց մնածա .
Գնազանու կար(պ)իկն ուն եկաց :
ԻԱ.— Որ գաստինան երկուց շտկոց .
Զարաւոնապես գիտարապետաց .
Զազարիին զսեղն ըռնաց .
Տէր յովաննիւս աշկերտ պատուած :
ԻԲ.— Ռաբութապես էր զարժար ած ,
Քազաբան անքափ սիր էր վարժած .
Սա րզմանաւում աղոյր գիտաց .
ԻԸ Վ(ա)րդ(ա)պ(ե)ւ ունին համած :
ԻԴ.— Ո հանդուրժեալ մեզ այս տեղաց .
Կարզըն պետաց առաջ շարձեաց .
Զիմինան անուում յիննուց միջաց .
Զեզմիկացին ինյոյն քազած :
ԻԴ.— Յ միմնասայ միմնա որսաց .
Ուսեալ զիմնասա համնարաց .
Եւ մակ հացախ էր յորքորչած .
Եր պատրիարք ըրոյ վամաց :
ԻԵ.— Ներսէս ա(ւր)ի(ն)է դր զու(է)ր
ա(սուու)ծ
Եւ զմակ քացախ վարպետդ յիշեաց .
Միմէ ի զօշէ ի ենց հասած .
Քոսան եւ մէկ գուազան կամքմած :
ԻԶ.— Սահայն դարձայց որ յես մնաց .
Զիմաշենցայն աշկերտ բռզած .
Զըորքան առաք յարեւեաց .
Եւ այս բռոս առեւմտաց :
ԻԷ.— Ռաբութապես գրոս պատմած .
Եւ աշակերտ զզր(ի)գ(ս)ր դրած .

- Տարօնացի յերկրան յիշած .
Մու ի եազար յին հարիւրաց (1451) .
ԻԸ.— Բաշինէր զիմնաս եւ գրամ կիմաց .
Տարօնացւոյն աշկերտ մուած .
Շիրաք է սայ տերանց կմէած .
Եւ յովաննիւս ձեռնադրած :
ԻԹ.— Ուներ գ(ու)կ(ա)ս գրանս շնորհաց .
Ի շիրակա դպրոց կեցած .
Սա կենցից ի խորձաննեաց .
Զյումիւար տումար տաղին չափեաց :
Լ.— Յանուս ուներ աշկերտ տովրած .
Մրապիսն միթրով քողաց .
Եւ հայրապես Հայոց աւծած .
Արքայց պարտից նահատակեաց :
ԼԱ.— Այժմ գրիգոր աշկերտն ա(ւր)ինած .
Խմասուուր(եամ)ր առանելեաց .
Ի կենարու կապակովկաց .
Զոսիկ թիրնիմ արռո նուռուծ :
ԼԱ.— Զամբեց յերկուց զիմնաս շնորհաց .
Ցուռկայ յունաք տեղ հայրեննեաց .
Ի յարեւելս մովսէս զնաց .
Կարաւալիկս կաց Ե. (5) ամաց :
ԼԳ.— Ուստի փիլիսիս նրգիազգեաց .
Զյուսաւ զալետան ընտիր պահեաց .
Պետ է եւ այժմ արք տեսուչաց .
Ցէշմածին յարռո նախնեաց :
ԼԴ.— Յակոր ծառայս բն պարտաւած .
Տէր փիլիսպու ժեզ ոզքյիշ տաց .
Մինչ ի զօշայ տա նոցեաց .
Տասին եւ կ(եօր)ից զաւազան սերած :
ԼԵ.— Ներ(ե)ց(է)ք ինձ բ(ս)գ(ս)ւմ մ(ե)ր
գ(ա)ց .
Ի որք կ(ե)նց(ա)նիք որք շիրիմած .
Ինձ յ(ա)կ(ա)բ(ա)ւ(ա)յ որ զձեց տաղեաց .
ՈՒ ի չորս Հայկեաց (1635) :
- Այս զաւազանագրին մասին հռո պիտի
յժանեանք : Կր բաւականանամ լոկ զայն
Հրատարակելով : Միայն նկատի առնենք որ
անկազերը կր կազմէն ՅԱԿՈԲ ԵՐԻՅ ԱԶԳՈՒՆ
(ԺԵ., ԺԶ. և ԺԷ. առներուն սկզբնաւա-
ռերը չեն գրուած) Ս. ԱԹՈՌՈՅՑՆ ՍՐԲՈՅՑ Ա-
ԶՈՅՑՆ : Այսպէս կր Հաստատուի որ Յակոր
երէց Սսեցի Սսոյ Աշպաննեան հին գերդաս-
տանին կը պատկանէր , որոնք Սոյոյ աթուան
կաթողիկոսներ տուած են , ինչպէս նաեւ Ե-
կեղեցականները Ալրէն տեսանք որ Հայէպի
անհատական ձեռագրաց ցուցակին թիւ 28

տաղարանին մէջ ալ Աջպան Յակոբ վարդապետ կոչուած է:

Յակոբ Սսեցի երեց էր գեռ երր կը գրէր յաջորդ տաղը զոր եղածին պէս հոս կը հրաժարակեմ, առնելով հաւաքածոյիս թի: 43 ժողովածու զբարէն: Խորագիրը կարմրաւ նոտրդիր՝

«Բողոքս յակոբ. իրիցի սրբեց»:

Յառ ի մէջ գետից.

Բնակ. մեր սրտից.

Ոչ քէ յեղերից.

Վաշ յակոբ զարմից:

Առ սամձան լեզուից.

Կառագեղ բերմից.

Ոչ կախ կտակից.

Այլ կոխան ուրից:

Յանկիւնս ճանճխարից.

Պաղապս հապալից.

Կառուայս մելանից.

Ի վիհս նաւը եազից:

Արջն համդերձից.

Կեդար վրանից.

Բայց բու ջրպարզից.

Գիշերս հաւից:

Կրրպակ սարդ նըմից.

Կրկեն վաս(ն) ճամնից.

Շամքըս եղեղից.

Թաւարան խօզից:

Ոստ և ուռ նղնինց

Արօս է մայսից.

Անտառ պրակից.

Որք լամբ լիզոնից:

Բայց առ ի զից-

Ցրնուռ բայն սզից.

Անտառս վայից.

Հաւարան ճագից:

Ամայի պրտղից.

Բայս փաշ դրժմից

Ճեմարան գայլից.

Աղնյ և ապւսից:

Յայրս աւագակից.

Գողքնաւ ոգ զռից.

Գողք սաւն զռակից.

Թաւի եւ թրփանկից:

Զգանիանս սւթից.

Տումրս ըստ դարից.

Սոսկ երկու ժառից.

Ի երեքն ընդ անձից(*):

Այր մնի մամունից.

Ի սըսոյ ժաւչից.

Սուռ ժահանայից.

Յակոբ խարողից:

Հեգե(ա)լ զմ(ա)խզիծ.

Զոյրս արտ(ա)ս(ս)ւ(ս)լից.

Թվին Ռ. (1000)ից

Ե (5) և Զ. (80)ից: (1636)

Տաղին տնկապերը կու տան ՅԱԿՈՒՄԱՅ (Զ)ԱՀ: Տեսանք որ տաղը գրուած է 1636ին, երբ երէցկինը չէր գախճանած զեռ:

Իսքէ հասած է նաեւ տաղ մը սա խորագրով. «Տաղ աղնիւ ասացեալ. Յակոբ վ(ա)րդ(ա)պ(ե)տէ ի վ(ե)ր(ա) քաղաքին բուզանդիրոյ. և է տունըն զարէնֆիլ ներկդին» (Հալէպի ցուցակին նոյն թիւ 28 Տաղարանը, որ կը պատկանի Պ. Վ.աճէ Սէթեանի ի Պէյրութ): Ահա ինչ որ հրատարակած է ցուցակադիր ողբացեալ Արտաւագդ Սրբազն Սիւրմէնան. —

Այս խաղ չափաբան յակորայ յերէւ.

Տես Աէկէր խօսի քահը կաստանդիխանէ.

Տաղ շայիրական նորայ խօսեմ է.

Կօր Աէկէր սոյլէր զկոստանդինուպուլսէ...:

Անկով լանձլարով պէտքը նորայ է.

Պատիրագ ամուռամբ արռա նստել է.

Աջպան վ(ա)րդ(ա)պ(ե)տէ ի տես եկել է.

Տես Աէկէր եւայլն.:

Բէմ գեմ դռ էշ զայ եկեղեցի է. —

Սուլումանասիր պատիրագարաբ է.

Սր. Սարգսի Քովմ. Սր. Նիկողայոս սկանչ չելագործն է

Սր. Ղաւառարիչ Ղալարիուս է;

Այսայ սօֆին այժմ տանկաց նամին է,

Փոխան զամկակախն մէզիներ կամչէ.

(*) Լուսամցին աւելցուած է շնչ տպր մերից:

Բ. (2) մինարէ մեկի մեկի դեմ է.

Տես մեղեր խօսի Կոստանդնովութուղուէ!

Բուզ ըրուա զբիլ մեծ ձանձրուրիւն է.

Գ. (3) մինարէլու եւթիի նամին է,

Սուլքան Սուլկյան Գ. (3) մինարէ է,

Կոր մեղեր սոյլէր Կոստանդնուպոլիս է . . .

Ցարուան լուծ թիւրն Թորգոն զարայ է,

Հազար ունուսուն քօյովը շինէ. (1650)

Յակոր սսակը տոր աջպատ տիւամէ . . .

Զիարացիր գովել Յակոր ենց հելց հելց . . .

Ցազս գուցէ ամբողջութեամբ քիչ ինչ շահեկան ըլլայ :

Աջպան Յակոր յարդապետ Սուեցիէ ան-
թրուակն յիշտակութիւն մըն ալ կը գրտ-
նենք Սոսյ Մայր Մաշտոցին մէջ (Ցուցակ
Հայէպի Բ. Հատոր Էջ 32ր.) :

Յակոր Սուեցիի տաղերը որեւէ բանաս-
տեղծական տաղանդ ցուց չեն տար եւ ոչ իսկ
միջակ հանգագիր մը կ'երեւէ: Լեռուն չէ
յզկուած եւ երրեմն անտեղի կերպով թրցե-
րէնով աղճատուած՝ խժալուր է: Ճիդ մը
կայ բան մը ըսած ըլլալու եւ սակայն առանց
գոյզն յաջողութեան: Տաղերը բառերու
շեղակոյտի մը տպաւորութիւնը կ'ընեն ըն-

թերցողին վրայ: Գուցէ ասոր համար է որ
իրմէ շատ բան չէ արտագրուած, քանի որ
վաստահօքն իրեն պէս բանաստեղծական մի-
ջակութիւն մը արտադրելու հիւանդութե-
նէն բռնուած րլալու էր:

Յարմար նկատեցի իր մասին այս մանր
աշխատութիւնը պատրաստել, ոչ թէ որով-
հետեւ տաղասացի մը իրաւունք շահած է իր
այս ծանօթ քանի մը ոտանառոններով, ոչ ու
որովհետեւ մեր մատենագրութիւն մէջ հոս
ու հոն յիշուած է, ինչպէս որ որդէն ցոյց
առուի: Ասկէ զատ իր «Եարագրութիւն Հա-
յոց ի Դաւազ Հետէ» գաւաղանագիրը բա-
նասիրութեան համուր նկատի առնուելիք
աշխատութիւն կը նկատեմ: Ան առով շա-
հած կ'ըլլայ իրաւունք՝ յիշուելու մեր մա-
տենագրական մեծ ու փոքր գէմքերու շար-
քին: Այս տաղը ցոյց կու տայ որոշ ծանօ-
թութիւն մեր հին մատենագրոններուն մա-
սին, որոնց տիրացած էր Յակոր Սուեցի ան-
տարակոյց կարդալով:

Իր մասին կենսագրական ծանօթութիւն-
ներ, ինչպէս բախնք, կը պակսին բոլորովին: Մա-
սուաւան թուականն իսկ անձանօթ է: Որո՞
է իր գերջին տաղէն որ 1650ին Պոլիս գրտ-
նեւած է: Իր մահը մենք կընանք ուրեմն
1650էն վերջ նշանակել:

Յ. ՔԻՒԲՏԻԱՆ